



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԼԵՆՏԵՅԼԻ  
 ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄ ՊԱՊ ԵՈՒՄՈՒՑԵԱՆԸ**

Նախօրօք ճշդուած ժամադրութեամբ մը, Ուրբաթ, 8 Յունիսի յետմիջօրէին Ազգային Առաջնորդարան այցելեց Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամ Պապ Եուսուֆեան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի կողմէ: Հանդիպումին ներկայ եղաւ Ազգային Վարչութեան գանձապահ Տիար Վահան Պզտիկեան եւ ժողովականութեան այլ ներկայացուցիչներ:

Յարգելի հիւրը առաջին անգամ ըլլալով էր որ կ'այցելէր Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէնքը: Առաջնորդ Սրբազանն ու ժողովականները ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ տուին հաստատութեան տարբեր բաժանմունքներուն, իրագործուած աշխատանքներուն ու յառաջիկայ ծրագիրներուն մասին: Խորհրդակցութեան նիւթ եղան նաեւ մեր գաղութի ու յատկապէս Կլենտէյլ քաղաքի շրջագիծին մէջ կարգ մը ծրագիրներ:

Պ. Եուսուֆեան գոհունակութեամբ ծանօթացաւ նոր շէնքին ու ծրագիրներուն, եւ պատրաստակամութիւն յայտնեց իր կարելիութեան սահմաններուն մէջ նպաստ բերելու Ազգային Առաջնորդարանին ու գաղութի ծրագիրներուն իրականացման:

**PRELATE WELCOMES GLENDALE CITY COUNCIL MEMBER  
 BOB YOUSEFIAN TO THE PRELACY**

On the afternoon of Friday, June 8, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Glendale City Council member Bob Yousefian to the Prelacy. Executive Council Treasurer Mr. Vahan Bezdikian and community representatives were also present at the meeting.

Given that it was Mr. Yousefian's first visit to the new building, the Prelate and representatives outlined the different departments within the Prelacy and the various work being carried out as well as future plans. Mr. Yousefian in turn expressed his support of the Prelacy and his willingness to assist in the actualization of future activities.